ՆՈՒԽԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Ներկայումս ազգային դպրոցի վերակառուցման ժամանակաշրջանում, մանկավարժական ասպարեզի աշխատողներից պահանջվում է ուսումնասիրել ու ընդհանրացնել ոչ միայն դպրոցի ներկայիս, այլեւ անցյալի առաջավոր փորձը, որն արժեքավոր է եւ ուսանելի այսօրվա դպրոցի համար: Մինչդեռ առ այսօր, հայ մանկավարժ պատմաբանների կողմից լրիվությամբ չի ուսումնասիրվել հայ լուսավորչական թեմերի Երեւանի, Վրաստանի, Նոր-Նախիջեւանի, Աստրախանի, Շամախու եւ Արցախի թեմի դպրոցի ու մանկավարժական մտքի ամբողջական պատմությունը:

Մեր հետազոտության նպատակն է փաստագրական-արխիվային հարուստ նյութերի եւ հավաստի սկզբնաղբյուրների հիման վրա պատկերացում տալ 19-րդ դարի Նուխի գավառի հայկական դպրոցների ամբողջական պատմության մասին:

Նուխին պատմական Շեքին, Արցախի թեմի հոգեւոր մշակութային կենտրոններից մեկն է: Տարբեր ժամանակներում այստեղ բնակվող հայությունը չնայած ենթարկվել է դաժան փորձությունների, բարբարոսների /թուրքերի, պարսիկների/ կողոպտչական հարձակումներին, այնուհանդերձ չի կորցրել ո՛չ ազգային ինքնությունը, ո՛չ հոգեկան արիությունը, պայքարել է հանուն ազգային գոյատեւման: Նուխիի հայությունը միշտ էլ միջոցներ ու հնարներ է գտել մշակութային կյանքի ամենաբազմազան դրսեւորումներում արտահայտելու իր հույզերն ու ձգտումները, ամենածանր պայմաններում ստեղծել է իր ազգային մշակույթը եւ դպրոցը:

Արցախի թեմի այս հատվածում դպրոցը անցել է դժվարին ճանապարհ. սոցիալ-տնտեսական եւ քաղաքական անբարենպաստ պայմանները չէին կարող իրենց կնիքը չդնել հայ դպրոցի վրա: Եվ չնայած այդ ամենին, հայ ժողովրդի պատմության տարբեր փուլերում դպրոցը շարունակել է ավելի կամ պակաս չափով ծառայել Նուխիի հայության կուլտուր-լուսավորական կարիքներին, նրա ազգապահպանման գործին:

19-րդ դարի սկզբին Ռուսաստանի մուտքն Անդրկովկաս նոր պայմաններ, նոր իրավիճակ ստեղծեց ինչպես արեւելահայերի, այնպես էլ Անդրկովկա-

սի տարբեր քաղաքներում ապրող հայերի հետագա առաջընթացի համար: Թեեւ չլուծվեց հայ ժողովրդի ազգային ազատագրության խնդիրը, սակայն նախկին անկարգ-անկանոն ռեժիմին, թալանին ու ավերին /Թուրքիայի, Իրանի/ փոխարինելու եկավ անձի ու սեփականության ապահովությունը, ստեղծվեցին ապրելու եւ գործելու անհամեմատ նպաստավոր ու խաղաղ պայմաններ:

Համեմատած բուն Հայաստանի, Արցախի եւ խոշոր հայաշատ շրջանների հետ՝ Նուխի գավառի /այն ժամանակ մտնում էր Արցախի թեմի մեջ/ հայաբնակ վայրերը, չնչին բացառությամբ, չունեին դպրոցական՝ ուսումնական կյանքի այն հարուստ ավանդույթները եւ փորձը, որ հատուկ էր ինչպես բուն Հայաստանին, Արցախին, այնպես էլ հայկական գաղութների շատ կենտրոններին:

Ռուսաստանին միանալուց հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Արցախի թեմի տնտեսական եւ մշակութային կյանքի զարգացման համար: Սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները որոշ պայմաններ ստեղծեցին Արցախի, Նուխիի բնակչության, հատկապես քաղաքային բնակչության զարգացման համար: Ըստ «Կավկազսկի կալենդար»-ի պաշտոնական տվյալների, դեռեւս 1795 թ. Շուշվա բնակչության թիվը հասնում էր 10 հազարի, Նուխի գավառում ապրում էր 6,445 մարդ: 1830 թ. Արցախի մշակութային կենտրոն Շուշի քաղաքում կար 763 հայ ընտանիք, իսկ Նուխի քաղաքում՝ 358[1]: 1962-63 թթ. մարդահամարի տվյալներով, Արցախում, Նուխի գավառում հայ բնակչությունն աճել էր գրեթե հինգ հազարով[2]:

Նուխիում նկատելի տեղաշարժ կատարվեց ինչպես առեւտրի, այնպես էլ արդյունաբերության մեջ: Ամենատարածված ճյուղը մետաքսի արդյունաբերությունն էր: Ի դեպ նշենք, որ մետաքսագործությունը մուտք է գործել Ղարաբաղ 1856-57 թթ.: Առաջին անգամ մետաքսի գործարան են բացել եղբայրներ Աղաբաբ եւ Գրիգոր Խաչատրյանները: Այդ գործարանում աշխատել են Նուխուց եկած բանվորներ[3]:

---

[1] «Կավկազսկի կալենդար», 1866, էջ 319:
[2] «Մշակ», 1882, թ. 8, «Ազգագրական հանդես», 1897, էջ 56:
[3] Տե՛ս, «Մեր ուղին», 1912, Բաքու, էջ 110: «Մշակ», 1888, թ. 100:

Նուխիում եւս ժողովրդական լուսավորության ասպարեզում որոշ տեղաշարժեր եղան: Հայ առաջադեմ գործիչներից շատերը սկսեցին Արցախում, նաեւ այստեղ մանկավարժական բեղմնավոր գործունեություն ծավալել:

Հայտնի է, որ 19-րդ դարի 20-ական թթ. սկսած Արցախի թեմում սկսեց ընդլայնվել դպրոցական ցանցը: Ականավոր բանասեր ու մանկավարժ Ալ. Երիցյանը Ներսիսյան դպրոցի պատմությանը նվիրած իր գրքում մատնանշում է, որ 1818 - 1820 թթ. տվյալներով Նուխի գավառում գործում էր 18 հայկական դպրոցներ Շեքի, Գեւոնի, Կուտկաշեն, Կաչմաչ, Արեշ, Աղդաշի եւ այլ գյուղերում: Հիշատակված դպրոցներում սովորում էին 15-20 հայ երեխաներ, ուսուցանում էին հայերեն, թվաբանություն, հին եւ նոր կտակարանի ընթերցանություն, աշխարհագրություն, թարգմանությունն էին կատարում գրաբարից աշխարհաբար եւ ընդհակառակը: Այդ առարկաները դասավանդում էին տեղական հայ հոգեւորականները եւ ուսուցիչներ: Արխիվային տվյալների համաձայն Նուխի քաղաքի կենտրոնում գործում էր 4 հայկական դպրոց, որը բացվել էին Եփրեմ կաթողիկոսի հրամանով, որտեղ սովորում էր 74 աշակերտ, դասավանդում 4 ուսուցիչ:

Հայ լուսավորական շարժման նշանավոր գործիչ, հրապարակախոս, մանկավարժ Մ. Թաղիադյանը /1821-1822 թթ. Եփրեմ կաթողիկոսի հետ այցելել է Շուշի, Նուխի/ իր «Ճանապաճհորդություն ի հայս» գրքում պատմում է, որ այն ժամանակ Արցախի հայտնի լուսավորիչներ Հովսեփ Արցախեցին, Պողոս վարդապետ Ղարաբաղցին դպրոցներ էին բացել Գանձասարի, Ս. Հակոբի վանքերում եւ Նուխի գավառում: 19-րդ դարի առաջին կեսին արցախահայ կյանքում այս գործիչները առաջին լուսավոր դեմքերն էին, որոնք դրվատում են մեր մայրենի լեզուն եւ գրականությունը, քննադատում հետամնացությունն ու տգիտությունը: Նրանք զգալի դեր խաղացին դպրոցի զարգացման, ուսուցչական կադրեր պատրաստելու, դասագրքեր կազմելու գործում:

Հայ մեծ վիպասան Ռաֆֆին նշում է, որ Հովսեփ Արցախեցու /տեր Ավագյան/ ծնողները Նուխի քաղաքից են եկել ու բնակություն հաստատել Արցախում 18-րդ դարի վերջին: Իսկ Լեոն իր «Պատմություն ղարաբաղի հայոց հոգեւոր թեմական դպրոցի» /1913/ գրքում նշում է, որ «ինչ այժմեան ժամանակ կարելի եղավ իմանալ Շուշու ցեցերից այն է, որ Հովսեփ Վարդապետ «իմաստասերը», «գիտնականը» ապրում էր Խաչենի Ղշլաղ գյուղում, վերին աստիճանին զվարճախոս էր»: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք,

որ Հովսեփ Արցախեցին բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել հայրենի Նուխի քաղաքում, բացել դպրոցներ, դասավանդել, ճարտասանություն, քերականություն, տրամաբանություն, գրաբար, աստվածաբանություն եւ այլ առարկաներ:

Արխիվային տվյալները եւ այլ նյութեր վկայում են, որ Նուխի դպրոցական կյանքում սկսվեց մի նոր տեղաշարժ, երբ 1829թ. օգոստոսի 2-ին ցարի կողմից հրապարակվում է առաջին պաշտոնական դպրոցական փաստաթուղթը Անդրկովկասի համար՝ «Անդրկովկասյան ուսումնարանների կանոնադրությունը»: Այս կանոնադրությամբ Անդրկովկասի ուսումնական գործը եւ դպրոցական համակարգը իրենց կազմակերպական հիմունքներով, բովանդակությամբ պետք է մոտենան համառուսականին: Վերոհիշյալ կանոնադրությամբ նախատեսվում է Անդրկովկասում ունենալ մի գիմնազիա /Թիֆլիսում/ եւ 20 գավառական ուսումնարաններ: 1831թ. Նուխիում բացվում է պետական գավառական ուսումնարան, որն ուներ 120 աշակերտ եւ 6 ուսուցիչ, աշակերտների 40 տոկոսը հայեր էին: Այդտեղ դասավանդում էին կրոն, պատմություն, ընթերցանություն, վայելչագրություն, թվաբանություն, հայոց եւ ռուսաց լեզուներ: Իսկ Շուշիում նման տիպի ուսումնարան բացվել է 1830թ.: Բացի պետական գավառական ուսումնարանից, 1830-ական թթ.Նուխի քաղաքում գործում էր 4 եկեղեցական ծխական, գավառում 3 հայկական դպրոց:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Նուխիի դպրոցական կյանքում զգալի տեղաշարժ կատարվեց հատկապես 1836թ. մարտի 11-ին՝ ինքնակալության կողմից հաստատված «Հայ լուսավորչական հավատի հոգեւոր կառավարման կանոնադրության» ընդունումից հետո, համաձայն որի Շուշին դառնում էր թեմական առաջնորդանիստ քաղաք եւ հոգեւոր կենտրոն ինչպես Արցախի, այնպես էլ Նուխիի հայերի համար, այսինքն Նուխին մտնում էր Արցախի թեմի մեջ:

Շուշիի թեմականն իր փոխանորդն ուներ Նուխիում /հոգեւոր եկեղեցական գործիչ Արիստակես վարդապետ Սեդրակյան/, որը ղեկավարում էր նաեւ լուսավորության գործը, հոգ տանում ուսումնարանների, վանքերի, եկեղեցիներին կից դպրոցների մասին: Թեմական առաջնորդներն սկսեցին ուշադրություն դարձնել հատկապես վանքերին ու եկեղեցիներին կից գործող դպրոցների վրա: Սակայն խոսելով 19-րդ դարի առաջին կեսին ազգային կրթության մասին, դժվար է արձանագրել գոյություն ունեցող կրթական մի

որոշակի համակարգ: Օրինակ, չկար դպրոցական միասնական կանոնադրություն, չկար մի որոշակի մարմին, որն ի վիճակի լիներ կարգավորել եւ միօրինակություն մտցնել դպրոցների տիպերի ու բնույթի մեջ:

Այդ ասպարեզում անուրանալի է, նաեւ Գանձասարի Հասան Ջալալյան տոհմի ականավոր հոգեւոր մշակութային գործիչ Բաղդասար միտրոպոլիտ - Հասան Ջալալյանի բեղմնավոր գործունեությունը դպրոցաշինության ու տպագրական գործի ասպարեզում: Սկզբում Գանձասարի վանքում հիմնեց /1830 թ./ եւ հրավիրեց ճարտասան եւ լավ հայկաբան Հովսեփ Արցախեցուն, որպես վարդապետ եւ նույն դպրոցի կառավարիչ: 1837թ. հուլիսի 1-ին Բաղդասար միտրոպոլիտը Հովհաննես կարբեցի կաթողիկոսի հորդորմամբ նշանակվեց Արցախի թեմի առաջնորդ եւ նույն թեմի կոնսիստորիայի նախագահ /կոնսիստորիան Շուշիում բացվել է 1837թ. նոյեմբերի 4-ին եւ իր մասնաճյուղը ուներ Նուխիում/: Կոնսիստորիայի անդամներ Ավետիք քահանա Տեր Ավագյանը, Առաքել քահանա Յուզբաշյանը շրջակայում էին Արցախի, Նուխիի գավառները, բացում եկեղեցական-ծխական դպրոցներ: Բաղդասար միտրոպոլիտը Շուշիում բացում է թեմական դպրոց, /1838/, իսկ Նուխիում ազգային հոգեւոր սեմինարիա: Բազմավաստակ պատմաբան Լեոն Շուշիի թեմական դպրոցին նվիրված աշխատության մեջ նշում է, որ Նուխիի ազգային հոգեւոր սեմինարիան հիմնվել է 1838 թվականին Շուշիի թեմական դպրոցի հետ միաժամանակ: Սկզբում այն եկեղեցական-ծխական էր, իսկ հետո, ինչպես երեւում է դարձել էր հոգեւոր դպրոց: Լեոն միաժամանակ մատնանշում է, որ հոգեւոր սեմինարիան գործել է համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններում, կանոնավոր վիճակում, քան գավառի մյուս դպրոցները:

Դպրոցական գործի վիճակը դառնում է Արցախի թեմի առաջնորդ հոգեւոր մեծ գործիչ Բաղդասար միտրոպոլիտի ուշադրության առարկան: Նա թեմի կոնսիստորիայի անդամներից եւ փոխանորդներից պահանջեց ամենամանրամասն վիճակագրական տեղեկություններ ներկայացնել Արցախի Նուխի գավառների հայկական դպրոցների մասին, որպեսզի հնարավոր լինի կարգադրություններ անել եւ վերացնել թերությունները:

Սարգիս արքեպիսկոպոս Հասան Ջալալյանը յուր «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստանի» աշխատության մեջ /1858/ մատնանշում է, որ հոգեւոր մեծ գործչի ձեռնարկումներից մեկն էլ այն եղավ, որ մեծ գումար հատկացնելով Վենետիկի Մխիթարյանների վանքին, բերել տվեց մի-մի օրինակ

նրանց բոլոր հրատարակություններից եւ ստեղծեց Շուշիի թեմական, Նուխիի հոգեւոր սեմինարիայի կից հարուստ գրադարան՝ այնտեղ հավաքելով նաեւ Արցախի, Նուխիի վանքերում գտնված նշանավոր գրչագիր մատյանները, որոնց մի մասը այսօր պահպանվում է մատենադարանում:

Սինոդին ներկայացրած Արցախի թեմի կոնսիստորիայի վիճակագրական տվյալներով 1840-ական թվականներին Արցախի 11 վանքերից՝ Ամարաս, Գանձասար եւ Գտիչ վանքերում գործում էին երեք եկեղեցական դպրոցներ, իսկ Նուխիի Վարդաշեն, Նիժ գյուղերի հայկական եկեղեցիների կից գործում էր մեկական դպրոց, ուր յուրաքանչյուրում սովորում էր 15-20 աշակերտ:

19-րդ դարի երկրորդ կեսին ինչպես Արցախի թեմում, այնպես էլ Նուխիում, մշակութային, դպրոցական, լուսավորական գործի առաջընթացը ամենասերտ կերպով կապված էր ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հասարակական եւ քաղաքական շարժումների հետ: Հասարակական-մշակութային կյանքի ընդհանուր աշխուժացման հենքի վրա էլ դպրոցական-լուսավորական գործը Նուխիում 19-րդ դարի 70-ական թվականներից սկսած որոշ զարթոնք է ապրում: Դա պայմանավորված էին մի շարք հանգամանքներով.

ա/ ժողովրդական լուսավորությունը, հատկապես դպրոցական գործը դառնում է հայ ժողովրդի առաջավոր գործիչների ամենակենսական հարցերից մեկը, նրանք բարձրացնում են նոր տիպի դպրոցների /իգական, երկսեռ, ծխական, տարրական/ հիմնադրման, կրթության բովանդակության, գործադրվող ուսուցման, մեթոդների կատարելագործման, դպրոցի կառավարման, մանկավարժական կադրերի պատրաստման, սովորողների դաստիարակության եւ այլ հարցեր,

բ/ սկսած 60-ական թվականներից Արցախի թեմում ասպարեզ են մտնում Ռուսաստանում եւ Եվրոպայում մանկավարժության ուսաց մասնագետ մանկավարժներ Ռ. Շանչյան, Ս. Մանդինյան, Արիստակես, Վ. Սեդրակյան, Լ. Սարգսյան, Վ. Պապաջանյան եւ ուրիշներ, որոնցից շատերը մանկավարժական բեղմնավոր գործունեություն են ծավալել նաեւ Նուխի քաղաքի ազգային հոգեւոր սեմինարիայում, Կուտկաշեն, Նիժ, Բեկլարիստ, Արեշ եւ այլ գյուղերի դպրոցներում.

գ/ լուսավորության տարածման, դպրոցական գործի զարգացման բնագավառում հսկայական դեր կատարեցին Շուշիում լույս տեսնող

մանկավարժական «Հայկական աշխարհ» /1874/, «Քնար խոսնակ» /1881/, «Գործը» /1882/, «Ազգագրական հանդես» /1896/ գրական քաղաքական, ազգագրական պարբերականները, որտեղ արտահայտում էին ժողովրդական խավերի տրամադրություններն ու հայացքները, առաջ քաշում կրթական համակարգի բարեփոխման բարձրացման, դպրոցը մանկավարժական որակյալ կադրերով ապահովելու կարեւոր հարցեր:

Ըստ պաշտոնական տվյալների, Ս. Էջմիածնի Սինոդին ներկայացրած Արցախի կոնսիստորիայի վիճակագրական տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ 60-70-ական թվականներին Նուխի գավառում ընդլայնվում է հայկական դպրոցների ցանցը, գործում էր 8 եկեղեցական - ծխական դպրոց, իսկ Նուխի քաղաքում գործում էր նաեւ ազգային հոգեւոր սեմինարիան, որն ուներ 3 դասարան, 3 պատրաստական, 5 ուսուցիչ, 116 աշակերտ: Հայոց հոգեւոր դպրոցում դասավանդում էին կրոն, հայոց եւ ռուսաց լեզուներ, հայոց, ռուսաց եւ ընդհանուր պատմություն, Հայաստանի եւ ընդհանուր աշխարհագրություն, երկրաչափություն, բնության պատմություն, երգեցողություն /կրոնական երգեր/, մարմնամարզություն եւ վայելչագրություն:

Բացի այդ, ազգային լուսավորական գործի զարգացմանը նպաստեց նաեւ հայ մտավորականության առաջատար գործիչներ Պ. Ստեփանյանի, Պ. Բաբայանի եւ Ե. Բահաթրյանի նախաձեռնությամբ 1860 թ. բացված Նուխի քաղաքում ընթերցարան գրադարանը /իսկ Շուշիում 1859 թ./, նրանք եւ տեղի հայ հասարակությունը շատ հայերեն եւ ռուսերեն գրքեր նվիրեցին ընթերցարան-գրադարանին:

Չնայած ժամանակաշրջանի տնտեսական ծանր պայմաններին այնուամենայնիվ, նոր տիպի դպրոցներ են բացվում Նուխի գավառի հայաշատ վայրերում: Այսպես, օրինակ, արխիվային մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1860թ. Նուխի գավառի Վարդաշեն գյուղում բացվեց Սուրբ Սահակյան հոգեւոր դպրոց/սեմինարիա/, ուր դասավանդում էին հայոց լեզու, ռուսաց լեզու, կրոն, ազգային պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, երգեցողություն: Այն ուներ մեկ առաջին եւ երկու պատրաստական դասարան, երկու ուսուցիչ եւ 70 աշակերտ: Իսկ Նիժ եւ Բեկլարիստ հայաշատ գյուղերում գործում էր ծխական դպրոց:

Արցախի թեմում, Նուխի գավառում դպրոցական գործի վիճակի բարելավումը կապված էր ամենայն հայոց Գ. կաթողիկոսի բարենորոգումների հետ,

մի շարք խնդիրների հետ միասին առաջ է քաշում դպրոցական գործը բարելավելու հարցը, պահանջում, որ նա ապահովի «ազգային դաստիարակության ծավալումը, սրտով, մտքով եւ հոգով հայեր պատրաստել»: Կաթողիկոսը էջմիածնի միաբաններից կազմում է ուսումնական հանձնաժողով /1867թ. հունիսի 14-ին/ կարգադրելով նրան մշակել դպրոցական կանոնադրություններ, որը եւ հաստատվում է 1862 թվականին: Ծխական դպրոցների կանոնները հրապարակելուց հետո, կաթողիկոսը առաջարկում է յուրաքանչյուր վանքի եւ եկեղեցու կից բացել ծխական դպրոց, որի նպատակն է կրթել հայ երեխաներին եւ պատրաստել նրանց թեմական դպրոց ընդունվելու: «Արարատ» ամսագրի 1869 թվականի համարներից մեկում կարդում ենք նուխեցու մի նամակ. «Գալուստ Յուզբաշյանը իր ջերմեռանդությամբ կառուցում է մի եկեղեցի, եւ Նուխի գավառի փոխնորդ հայր Արիստակես Վարդապետյանը, տեսնելով այս բարեգործությունը, այդ եկեղեցուն կից բացել է տալիս մի վարժարան»: Դպրոցաշինությանը զուգահեռ Նուխիում խնդիր է դրվում բացել գրադարան-ընթերցարան /1860թ. Նուխի քաղաքում բացած գրադարան-ընթերցարանը 2-3 տարի գործելուց հետո փակվում է, կապված նյութական միջոցների հետ/: Այդ գործում Նուխիի հայ հասարակությունը ակտիվ մասնակցություն է ունենում: Նա 650 ռուբլի է հավաքում գրադարան-ընթերցարան բացելու նպատակով եւ խնդրագիր ուղարկում կաթողիկոսին, որը եւ հաստատվում է 1870 թվականին. Լեոն Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրած իր աշխատության մեջ մատնանշում է. «Ջերմեռանդորեն կատարված այս գործը մեծ աշխուժություն առաջացրեց Նուխվա եւ Շուշվա հայ հասարակության մեջ»: Նուխվա հայ հասարակությունը հանգանակություն էր կատարում եւ հավաքած գումարները հատկացնում նորաբաց դպրոցներին: Գավառի գյուղերում ու քաղաքներում նորանոր դպրոցներ բացելու հասարակական վճիռներ էին կայացնում: 1875թ.«Դպրոց» ամսագիրը հրապարակել է վիճակագրություն, համաձայն որի այդ ժամանակ Նուխի գավառի հայաբնակ գյուղերում գործում էր 15 հայկական դպրոց, իսկ քաղաքում՝ 2 ծխական, 1 ազգային հոգեւոր դպրոց՝ 217 աշակերտի եւ 6 ուսուցչի ընդգրկմամբ, եւ մեկ իգական դպրոց:

Հայտնի է, որ հայ կանանց կրթության հարցը հայ մտավորականության կողմից լայն քննարկման առարկա դարձավ առանձնապես 19-րդ դարի 60-ական թվականներին: Այդ տասնամյակում հայ իրականության մեջ սկսած լուսավորական շարժումը առաջադրեց նաեւ կանանց կրթության հարցը:

Դեռեւս «Յուսիսափայլ» ամսագրում տպագրված մի նամակում Մ. Նալբանդյանը պատկերավոր ասել է.«Մայրը պիտի ուսուցանե յուր զավակներին ազգային լեզու, մայրը պիտի տնկե տղայական սրտերի մեջ ազգության սերմը այնպիսի խնամքով եւ հոգաբարձությամբ, որ Յուսիսի ցրտաբեր մրրիկը կամ Հարավի այրող օդը չկարողանային չորացնել նորանից ծլելու բույսը» /«Յուսիսափայլ», 1860, թ. 1, էջ 79/:

Կանաց կրթությունն ու դատիարակությունը համարելով ազգային վերածնության կարեւոր նախապայմաններից մեկը, Ղ. Աղայանը առաջ է քաշում գրագետ մայրեր պատրաստելու, իգական դպրոցներ հիմնելու խնդիրը: Եվ այսպես, 19-րդ դարի 60-ական թթ. սկսած հայ լուսավորչական թեմերում բացվում էին իգական դպրոցներ: Շուշիի օրիորդաց դպրոցի բացումից /1864/ 10 տարի անց 1873-1874 ուս. տարում Նուխի քաղաքում բացվում է իգական դպրոց, ուր սովորում էին 18 աշակերտ: 1883-84 թթ. Նուխի քաղաքում բացվում է Ս. Մարիամյան օրիորդաց միջնակարգ դպրոց, որը ունեցել է 2 բաժանմունք, 5 ուսուցիչ, 82 աշակերտուհի: 1888 է. եղել է երկդասյան երկսեռ դպրոց 4 բաժանմունքով, 97 աշակերտ, որից 40 աղջիկ: 1891թ. դպրոցը դարձավ չորսդասյա միջնակարգ, իսկ 40-ական թթ. վերջերին այն փակվել է, վերաբացվել միայն 1906-1907 ուս. տարում: Երկդասյան իգական դպրոցը ունեցել է հինգ հիմնական եւ երկու զուգընթաց բաժանմունքներ, 355 աշակերտուհի:

Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալների համաձայն, Նուխի գավառի Վարդաշեն գյուղի հայ բնակչություն չէր բավարարվել միայն արական դպրոցով: Գրիգորիս վարդապետի հորդորանքով եւ օգնությամբ 1878 թ. վարդաշենցիները հանգանակում են, հավաքում որոշակի գումար եւ բացում իգական դպրոց, որն այն ճամանակվա հայ գյուղի համար մի բացառիկ երեւույթ էր: Մի քանի տարի իր գոյությունը պահպանելուց հետո, այս դպրոցը 1884 թ. միացել է արական դպրոցին եւ Վարդաշենում սկսել է գործել միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորում էին 35 աշակերտ, որոնցից 9-ը աղջիկ: Հետագայում վարդաշեցիների խնդրանքով կաթողիկոսը թույլատրում է նորից բացել իգական դպրոց, որը գործել է միայն 1895-1896թթ.:

Հայկական դպրոցների վերաբացումից հետո /որը փակվել է 1896-1906թթ./ 1907-1908 ուս. տարում Վարդաշեն գյուղում բացվել է երկսեռ դպրոց:

Իգական դպրոցներ են բացվել նաեւ հայաբնակ Կախ գյուղում՝ 1894 թ., Նիժ գյուղում՝ 1895 թ., Ճալեթ գյուղում՝ 1896թ. եւ այլ վայրերում: Եվ այսպես,

հայ կանաց կրթության գործը ինչպես արեւելահայ հատվածում, Արցախում, այնպես էլ Նուխի գավառում որոշ առաջընթաց է ապրում 19-րդ դարի երկրորդ կեսին: 19-րդ դարի 80-ական թվականներին դպրոցական կյանքում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան: Դա պայմանավորված էր հետեւյալ հանգամանքով: Եթե մինչ այդ հայկական դպրոցների բացման ու պահպանման հետ կապված ամենածանր ու դժվարին խնդիրը եղել է նյութական-դրամական միջոցներ հայթայթելը, նյութական անապահովության հետ կապված, շատ հաճախ նորաբաց դպրոցը դադարեցրել է իր գոյությունը, ապա այս շրջանում հայկական դպրոցների շուրջը ծավալված լուսավորական շարժումը ոչ միայն նախանձախնդիր եղավ բարձրացնելու դպրոցական գործը, այլեւ մտահոգվելու դպրոցի համար նյութական միջոցներ հայթայթելու հարցով: Ազգային դպրոցների պահպանման եւ բեղմնավոր գործունեության վճռական պայմաններից մեկը հայ գործիչները համարում էին դպրոցի նյութական միջոցների ապահովումը:

19-րդ դարի 90-ական թվականներին ցարիզմի հետադիմական քաղաքականությունը գնալով ավելի է ուժեղանում: Խիստ հսկողություն է սահմանվում նաեւ հայկական դպրոցների վրա: Շուրջ 10 տարի /1896-1906թթ/ Արեւելահայ հատվածում, Արցախում, ինչպես նաեւ Նուխիում փակվում են հայկական դպրոցները, իհարկե, որոշ տեղերում գործում էին կառավարությունից գաղտնի՝ մասնավոր տներում: Միայն 1906 թվականին կառավարության թույլտվությամբ վերաբացվում են հայկական Ս. Թջ. Սինոդի վիճակագրական տվյալներով 1906 թ. Նուխի գավառում բացվել է 15-ից ավելի հայկական միդասյան՝ Նուխի քաղաքում երկդասյան դպրոց, որոնց մի մասը գործել է մինչեւ 1920 թվականը:

Վերոհիշյալ համառոտակի շարադրանքից բխում է այն հետեւությունը, որ լինելով Արցախի թեմի մի հատված նուխվաբնակ հայերը կարեւոր դեր են կատարել հայ ժողովրդի հասարակական ու մշակութային կյանքում՝ նրա ամբողջ պատմության ընթացքում: Նրանք նույնպես կիսել են ողջ հայ ժողովրդի դժվարին ճակատագիրը, իրենց ավանդն են ներդրել նրա նյութական եւ հոգեւոր մշակույթի դպրոցի զարգացման գործում: